ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-2

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի կարիքների համար շենքերի մաքրման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 20.11.2024թ. N 437/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.12.2024թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:

Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Երեղյանը, Ս.Ալավերդյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի բացման և գնահատման մասին

1.Հայտեր ներկայացրած մասնակիցների անվանումները

-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/5 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նախագահ Լ.Հարությունյանը տեղեկացրեց, որ ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-24/5 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդի հրավերով սահմանված հայտերի ներկայացման վերջնաժամկետին հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

-«Անմեյն» ՍՊԸ-ն (ք.Երևան, Կ.Ուլնեցու-1թկղ. շենք-3,բն.36)

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը

Հ/Հ	Հ/Հ	Մասնակիցների անվանումները	Ծառայության անվանումը	Ներկայացրած գները ՀՀ դրամ			պլանավորված ընդհանուր գին ՀՀ դրամ
				ներկայացրած գները՝ առանց ԱԱՀ-ի ՀՀ դրամ	ԱԱՀ	ներկայացրած գները՝ ներառյալ ԱԱՀ-ն ՀՀ դրամ	
1	1	«Անմեյն» ՍՊԸ	Շենքերի մաքրման ծառայություններ	75 637 500	20%	90 765 000	**90 765 600**

3. Տեղեկություններ հայտերի հետկանչման կամ փոփոխությունների, հայտերի վերաբերյալ կատարված հարցումների մասին

-Հայտերի հետկանչում կամ փոփոխություններ, հայտերի վերաբերյալ կատարված հարցումներ և պատասխաններ չեն եղել:

4.Տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերի պայմաններին համապատասխանության վերաբերյալ

Առաջին տեղը զբաղեցրած «Անմեյն» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում ներառված փաստաթղթերը կազմված են հրավերի պայմաններին համապատասխան:

5. Հանձնաժողովը որոշեց՝

Քննարկման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց հայտի գնահատումն իրականացնել նույն նիստի ընթացքում:

1. «Անմեյն» ՍՊԸ-ին ճանաչել հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտ ներկայացրած մասնակից:

2. Հաշվի առնելով, որ «Անմեյն» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացրած գինը չի գերազանցում ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից պլանավորված ընդհանուր գինը՝

-«Անմեյն» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:

3 Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Անմեյն» ՍՊԸ-ին՝ պայմանագիր կնքելու համար՝ պահանջելով «Անմեյն» ՍՊԸ-ից ներկայացնելու որակավորման և պայմանագրի ապահովումները:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Հարությունյան

Անդամներ՝ Գ.Երեղյան

Ս.Ալավերդյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան